Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ

# ՆՇԱՆԱՍԻՄՎՈԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԱՂԵՏՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԵՐԱԶՆԵՐՈՒՄ

Սիմվոլիկայի հիմնախնդիրը համամշակութային և ընդհանուր հոգեբանական ուսումնասիրությունների ոլորտի հարցադրում է: Ցանկացած մշակույթ համընդհանուր արժեքների և խորհրդանիշերի համակարգ է: Սիմվոլն առարկայի օրինաչափ կանոնակարգվածությունն է, որը բացահայտվում է իմաստային կառուցվածքի մեջ՝ տվյալ առարկայի մոդելը ստեղծելու ձևով: Երազն ինքնին սիմվոլիկ երևույթ է, որն արտահայտում է ոչ թե անմիջական իրադրությունը, այլ իրողությունների անուղղակի, այլաբերական բնույթը:

Երազային պատկերները, թեպետև թովանդակում են սիմվոլային բնույթ, այնուամենայնիվ, չեն հանգում միայն սիմվոլի, այլ ներառում են նաև կենսական անվերջ հնարավորություններ, որոնք կարող են սիմվոլ չլինել:

Ազգամշակութային ոչ բոլոր սովորույթներն ու ավանդույթները, ծեսերն ու գործողություններն են դառնում էթնիկական սիմվոլներ: Վերջիններս ստեղծվում են միայն մշակութային տարրերի և էթնիկական կայուն կաղապարային ձևերի (ստերեոտիպերի) մշակման հիման վրա, որն ենթադրում է ժամանակային մեծ ընդգրկում:

Մարդկային բանականությունը ներառում է բնազդային հասկացության նախաձևեր, որոնք, անշուշտ, կարող են միավորվել արքետիպերին համապատասխան հոգեկան մոդելում:

Բնապատմական զարգացման ընթացքում սիմվոլների նախնական իմաստը մթագնվում է: Բնության նկատմամբ մարդու հուզական կենսաէներգիան աստիճանաբար թուլանում է, որը առաջ այդ ապահովված էր խորհրդանշանային կապի ձևով: Այս մեծագույն կորուստը փոխհատուցվում է մեր երազների սիմվոլներով, որոնք արտաքին մակերևույթ են հանում մեր նյսկեսային բնույթը՝ բնազդները և ինքնաբուխ մտքերը:

Յուրաքանչյուր ազգային մշակույթ կրող անձ, վերրալ՝ խոսքային արտահայտչական միջոցներով վերարտադրում է երազների խորհրդանշանային համակարգը:

Խորհրդանիշերի լեզվի յուրահատկությամբ մենք արտահայտում ենք մեր ներքին վիճակն՝ իբրև զգայական ընկալում: Երազում տեսած կամ հայտնված տեսողական պատկերը մեր զգայությունների խորհրդանիշն է:

Երազի ճշգրիտ մեկնաբանությունը հնարավոր է միայն տվյալ նյութի անընդհատ զարգացման առանձնահատկությունները քննելուց հետո:

Այսպիսով, սիմվոլիկ միջոցները ոչ միայն ընդլայնում են իրականությունը, այլև դիտում են որակական նոր տեսանկյունով:

Անձի հոգեաշխարհի սիմվոլային դրսևորումը ավելի խոր և ուժեղ հուզական հագեցվածություն ունի՝ ոչ սիմվոլային լեզվով արտահայտվածի համեմատությամբ:

Երազների նշանասիմվոլային համակարգը պարզելու խնդրին զուգահեռ, համեմատման կարգով քննարկենք համամարդկային, ազգային (սոցիալ-մշակութային) և անհատական սիմվոլները, որոնք կարևորվում են երազները մեկնաբանելիս: Ազգային և անձնային սիմվոլները քննարկելիս ոչ պակաս կարևորություն է տրվում նրանց իմաստներին և նշանակությանը:

Նկատի ունենալով թեմայի առանձնահատկությունները (հետաղետյան շրջանի երազներ)՝ առավելապես անդրադառնանք այն սիմվոլներին, որոնք ունեն արքետիպային, առասպելաբանական բնույթ և սերտորեն առնչվում են հայ ժողովրդական հավատալիքային հոգեբանությանը:

Գրառված երազային նյութի սիմվոլային առանձնահատկությունները քննելիս նախ նշենք, թե ինչ կարող է ավելացնել համամարդկային սիմվոլի իմաստային մեկնությանը համանման ազգային խորհրդանիշը՝ ընդգծելով այն տիպականն ու յուրահատուկը, որով ազգայինը տարբերվում է համամարդկային սիմվոլից: Բնական է, որ ազգային սիմվոլներն

ստեղծվել են տվյալ ազգի մշակույթում՝ իբրև պատմամշակութային զարգացման արդյունք (օր.՝ ազգային հերոսի կամ ազգային թշնամու գաղափար-խորհրդանիշը, սարածք կորցրած ժողովրդին բնորոշ հայրենաքաղծությունը):

Այսպես՝ կրակի սիմվոլը ունի բազմանշանակ իմաստ (սուրբ, լույս, անշեջ), որն առնչվում է Հիսուսի, եկեղեցու, սրբության պատկերացումներին: Կրակի սիմվոլիկան մտնում է երազատեսության կառուցվածքի մեջ, ընդգծում է կյանքի ամբողջականությունը՝ որպես կենսական սկիզբ: Ակնհայտորեն, այն ծագել է արքեաիկ մտածողությունից՝ սրսյմանավորված մարդու կյանքում նրանի օգտապաշտական բնույթով: Համամարդկային մշակույթում հանդիպում ենք «կրակի չորս գագաթներ» սիմվոլին, որով և կրակի խորհրդանիշը ընդլայնվում, ծավալվում է. այն միշտ շարժվում է, փոխվում է՝ իր մեջ պահելով ինչոր մշանջենական բան:

Հայոց սովորութամշակութային կենցաղում կրակին պահպանության գործառույթ են վերագրել, հավատքով, որ հալածում է չար ոգիներին: Կրակի խորհրդանշանային իմաստի ազգային երանգավորումն այն է, որ ընդհանրացվում է օջախի գաղափարի հետ (լույս-կրակ-օջախ)՝ ներստելով համամարդկային սիմվոլի՝ կենաց սկզբի իմաստը:

Հայերը օջախի պաշտամունքը կապում են տան, կրակի ու նախնիների պաշտամունքի հետ: Օջախն ընտանիքի խորհրդանիշն է, օջախի կրակը ընտանիքի հարատևությունն: «Աստված կրակը ձեր օջախում միշտ վառ պահի», այսինքն՝ ձեր ցեղը թող միշտ գոյատևի:

Ամուսնական սառգյսառ մանելուց առաջ թագվորը պարտավոր էր կրակով մաքրվել, նախ՝ փորձանքներից ու չար ոգիներից ազատվելու, ապա՝ տղամարդկային առնականությունը ասրսեռվելու համար:

Հայոց մեջ մեղք են համարել ասել՝ «Կրակը հանգցրու», փոխարեն սաել են՝ «Կրակն օրհնիր»:

Այսպիսով՝ կրակի սիմվոլային համակարգը, անկախ դրսևորման բնույթից, ունի ընդհանուր առանձնահատկություններ:

Կրակի համամարդկային սիմվոլի ընկալումը յուրօրինակ ազգային երանգավորում է ստանում հայ հավատալիքային կենցաղում, որը նույն գործառական նշանակությամբ փոխանցվում է երազային մտածողությանը:

Առարկայական աշխարհի սիմվոլացված պատկերների կողքին երազային մտածողությունը պահանջում է բոլոր թաղադրամասերով սիմվոլացում: Իմաստի և նշանակության, ձևի և բովանդակության փոխակերպումները մեկ սիմվոլից մյուսին անցնելիս երազային սիմվոլիկայի կարևոր առանձնահատկություններից է: Այս իմաստով, սիմվոլները ծածկում են մեկը մյուսին, և նրանց գերադասությունն ու ստորադասությունը պայմանավորված է սիմվոլների կառուցման, արտահայտման տրամաբանությամբ:

Սիմվոլացվում է կյանքի առաջացումը՝ նախանյութ-սկզբնատարրերից երկնքի և երկրի առանձնացամբ, մարդկային ցեղի ծագումնարանությունը (արական և իգական սկիզբ)՝ սերված տիեզերական ծառից:

Ազգային սիմվոլների ծագումն ու հետագա զարգացումը կառուցվում են էթնիկական ինքնագիտակցության թաղայրիչներին համապատասխան: Նկատի անենք մարդկանց էթնիկական պատկանելիության գիտակցումը, ազգակենտրոնաթյունը (էթնոցենտրիզմ), էթնիկական կայուն ավանդաձևերը, էթնիկ համակրանքն ու հակակրանքը:

Առանձնացնելով համամարդկային, ազգային և անձնային սիմվոլները գրառված երազներում ցույց տանք, թե ինչպես են համամարդկային սիմվոլներն իրենց նշանակությամբ վերածվում կամ փոխակերպվում ազգային սիմվոլների, որոնք ազգի հոգևոր մշակույթում անեն յուրահատուկ իմաստ:

Ազգային սիմվոլներն իրենց հերթին դառնում են զատ անձնային՝ համապատասխան փոփոխություններ կրելով նաև ազգային և անձնային իմաստներում: Քանի որ այս երևույթը ընդհանրական է հոգևոր մշակույթի տարբեր ձևերում, հետևաբար անդրադառնանք անսղական սիմվոլների փոխակերպմանը՝ նկատի ունենալով, որ բոլորովին տարբեր է մարդու վերաբերմանքը սիմվոլի երազային և դրան համապատասխան մշակութային

դրսևորումներում:

Հայ ազգային մշակութային սիմվոլները ցույց են տալիս, որ դրանք ըստ նշանակության նույնն են, ինչ-որ համամարդկայինը՝ ավելացրած տարածքային, բնակլիմայական, էթնիկական առանձնահատկություններից բխող իմաստները:

Հատկանշական են նաև այն պատկերացումները, որոնք բնորոշում են նյութական մշակույթի համընդհանրականությունը, էթնիկական առանձնահատկությունների տեղափոխումը հոգևոր մշակույթի դորա, որի բազոր տարրերը կրում են սոցիալական որոշակի դրոշմ, այլ կերպ ասած՝ համընդհանուր մշակութային տարրերը, սոցիալական պարզագույն կառուցվածքները, տոները, ծեսերը, սովորույթներն ու ավանդույթները ներառված են ազգամշակութային համակարգում՝ դառնալով որոշակի յուրահատկությամբ նշաններ, սիմվոլներ, որոնք նույնական չեն բուն տարրերին և գոյություն ունեն միայն այդ համակարգի սահմաններում:

Երբեմն ազգային սիմվոլը կարող է դառնալ ազգային միասնականությունն ու ամբողջականությունն ապահովող գործոն՝ արտահայտելով ազգի հոգևորանական հիմնահարցը: Եթե տվյալ սիմվոլը ազգի կյանքում յուրացված է, ապա կրում է ազգային հոգևորանության տարարնույթ շերտեր և ազգի հոգևկան ձգտումների խտացումն է, ինչպես ազգային էպիկական հերոսի կերպար սիմվոլները (Ս. Դավիթ, Փոքր Մհեր), այնպես էլ հայ էթնոսի պատմական բախտին ու ճակատագրին առնչվող հերոսի սիմվոլները:

Ազգային սիմվոլների մեկնաբանության միջոցով կարելի է հանգել ազգային մտածելակերպի սիմվոլացման:

Ազգային սիմվոլների էթնամշակութային բացառիկությունը ամենայն հավանականությամբ ցույց է տալիս համընդհանուր տարրերի յուրահատուկ իմաստային բեռնվածությունը: Բոլորովին այլ է, երբ այդ տարրերը ունեն յուրահատուկ առարկայական ձևեր՝ պայմանավորված աշխարհի և մարդկանց մասին ունեցած պատկերացումներով:

Տվյալ ազգամշակույթում օգտագործվող սիմվոլների իմացությունը հեշտացնում է այն կրողների գիտակցական և ենթագիտակցական հոգեկան գործունեության ըմբռնումը՝ ավելի դյուրին և ճիշտ մեկնաբանելով ներէթնիկական խմբին պատկանող անձանց փոխհարաբերությունների բնույթը:

Ազգային-անձնային սիմվոլների հարաբերակցությամբ կարելի է վերլուծել ցանկացած երազ, որի մեջ առկա է ազգային սիմվոլ՝ առանձնացնելով նրա անձնային իմաստը: Վերջինիս մասին ամբողջական պատկերացում է տալիս տվյալ անձը՝ մեկնելով այս կամ այն սիմվոլի նշանակությունը:

Ընդհանուր առմամբ, համամարդկայինից ազգայինին անցնելիս ընդլայնվում է սիմվոլի իմաստը նույն բովանդակության մեջ, հանդես է գալիս դրսևորման բազմաձևությամբ, արտահայտման տարարնույթ ձևերով: Ազգային սիմվոլի պաթազայում այդ բազմակերպությունը թեպետ առարկայական է, բայց ընդհանրացված է և կայուն՝ ձեռք բերելով ախպական բնորոշումներ: Այս առումով սիմվոլը մեծ հարստություն է տվյալ ազգի մշակույթում:

Վկայակոչենք ազգային նկարագիր ունեցող երազներ. «Երազիս երկինքը շատ մութ էր: Ամպերը ետ գնացին, տեսա աղամարդու զենքը սաղավարտով, ձեռքին՝ թուր: Երազիս ինձ ասում էին, որ Վարդան Մամիկոնյանն է: Թուրը հենց հանում էր պատյանից, գեահնը շարժվում էր, հենց դնում էր պատյանը, կանգ էր առնում: Մարդը ձեռքին մեծ կծիկ ուներ՝ խճճված: Կծիկը շպրտեց մարդկանց ու ըսեց՝ բացեք: Էդ պարաններից մեկի ծայրին խաչ կար:Խաչն ընձի բաժին ընկավ»:

Այսպիսով՝ ազգային սիմվոլ ներառող երազում (կոնկրետ դեպքում Վարդան Մամիկոնյանի սիմվոլ-նկարագիրը) պահպանվել են ազգային հերոսի մասին երազատես անձի իրական պատկերացումները, առկա է համապատասխանություն երազային և իրական մտածողությունների միջև: Ազգային հերոսի նկարագրի ընկալման և պատմական հիշողության յուրահատկությունը, ազգի կողմից տվյալ սիմվոլի ընդհանրացվածությունը անցել է երազային մտածողություն:

«Երազիս Ղարս տանող ճամփեքը բացվել էին: Մեծ երախտություն էր, շքերթ,

առանձնամբություն: Հրապարակում ազոտվներ էին հավաքվել: Կռոոց էր ու կանչում: Մարդիկ մեծ ճամփի պատրաստություն էին տեսնում»:

Երազի մեկնումը, ինձ թվում է՝ ես զոհերի երազանքը տեսա. «Ղարսի ճամփեքը բացվել էին»:

Երազային մտածողության մեջ արտահայտվում է ազգի դիրքորոշումն ու պատմական երազանքը, որը ընորոշ է տարածք կորցրած ժողովրդին՝ միավորված տեսնել պատմաաշխարհագրական Հայաստանը: Այսպես օրինակ.

«Երազիս Անի քաղաքը տեսա: Ամբողջ քաղաքը գերեզմանատուն էր՝ քարե ու միահավասար: Չորս բոլորը պարսպապատված էր ու մինչև երկինք, ինչքան որ աչքս կխոռեր, մարմարյա ճերմակ խաչեր էին: Պտուսպից դուրս չոլա կողմը բարակ ու զուլալ առու էր: Տեսա՝ հեռվից զորք է գալիս՝ սփին տվող գերեզմանները արորելով: Ման եմ գալիս էդ քաղաքի մեջ ու ասում՝ Անի ջան, Անի, իմ սիրուն Անի»:

Երազում արտահայտված է ազգի պատմամշակութային մոդելի սիմվոլացումը՝ նյութական և հոգևոր Հայաստանի կերպարի միջոցով: Երազատեսը Անի քաղաքի հոգևոր հատակագծի պատկերն է ուրվագծում, իբրև կորուսյալ դրախտի սիմվոլ:

Քանի որ առնչվում ենք սիմվոլների բառային արտահայտություններին, հետևաբար նպատակահարմար է սիպական երազների օրինակով ցույց տալ սիմվոլների փոխակերպման առանձնահատկությունները՝ ըստ տեքստի, ենթատեքստի և համատեքստի: Այդ փոխակերպումները (տրանսֆորմացիան) կարելի է բացատրել տվյալ տեքստի նշանագիտական (սեմանտիկական) վերլուծությանը զուգընթաց: Կարելի է ներկայացնել երազային տեքստի այն սրսեռը,որոնք առավելագույն ամբողջությամբ կարող են ցույց տալ սիմվոլների փոխակերպման հնարավոր մեխանիզմները:

Նախապես սիմվոլների փոխակերպում կարելի է անվանել երազի տեքստից և համատեքստից բխող գրեթե նույն բովանդակությունն ունեցող, բայց թաքնված իմաստներ արտահայտող սիմվոլների անցումները (փոխակերպման արդյունքում հնարավոր է բառիմաստի ծավալում, ընդարձակում կամ ընդհակառակը՝ նեղացում, փոքրացում):

Սիմվոլների փոխանցման ժամանակ նկատելի է, որ ուժեղ սիմվոլը ճնշում է թույլին, փոքրին, այսպես՝ կյանքի և մահվան սիմվոլը իշխում է պակաս կարևոր, առօրյա հոգս ու մտահոգություն ներկայացնող սիմվոլին. ուժեղ սիմվոլի գերակայությունը պայմանավորված է կյանքի կենսական նշանակության բնույթով:

Այսպես. երազատեսը պատմում է. «Երազիս եկեղեցի տեսա, Էջմիածինը չէր, բայց Էջմիածնին նման մի այլ եկեղեցի էր: Սևալաչակ կանայք բակում մեծ կաթսաների մեջ մատաղ էին եփում: Ես մոտենում եմ և խնդրում, որ ինձ էլ բաժին տան: Նրանցից մեկն ինձ ասում է՝ դու դեռ եաց կեր»:

Տեքստի առաջին նախադասությունն ունի այսպիսի թաքնված իմաստ. հավատի տաճարը պահապան-զորավիգ է երազատեսին և բոլորին, ինքը տեսնում է, ոչ թե Մայր Աթոռը, այլ վերջինիս նման մի եկեղեցի, նկատի ունի, որ ազգի (և հոգևոր, և ֆիզիկական) պահպանումը չի լինելու ամբողջությամբ (կամ մի մասին է պահպանելու, կամ, պարզապես, ինչ-որ տեղ մասամբ է լինելու): Եկեղեցու սիմվոլն ունի հավատի թաքնված իմաստ, ինչպես հետագա շարադրանքում երևում է՝ այդ սիմվոլը փոխակերպվում է՝ դառնալով ենթատեքստային. մատաղը իրեն կհասնի՞, թե՞ ոչ: Փաստորեն, մեծ հավատը նեղանում է՝ դառնալով անձին վերաբերող: Սիմվոլը փոխակերպվում է այն իմաստով, որ մեծ, ամբողջական պատկերացումներից տրոհվում է մինչև կոնկրետ ճակատագրին վերաբերելը (ինչ է վերապահված երազատես անձին, ինչ-որ բան հասնելու է, թե ինքը դեռ սպասի): Ծեր կանանց մասնալ հիհելը ևս սիմվոլիկ, սրայմանական բնույթ ունի (զոհ տալու սիմվոլիկ արարողություն) աեքսատում Էջմիածնի եկեղեցու և զոհ մատուցելու սիմվոլները լրացնում են մեկը մյուսին: Թաքնված իմաստն այն է, թե ինչ են եվլում և երազատեսին ինչ է հասնում նրանից: Վերջին դարձվածքը՝ «դու դեռ եաց կեր» մեծ հավատի որոշալիացումն է: Տեքստային սիմվոլիկան ևս որոշակի իմաստ ունի՝ դեռ քո հերթը չէ: Վերապահված է ինչ-որ դժբախտություն, բայց իրեն չի վերաբերելու, որն էլ եղք է տալիս երազատեսին:

Հոգևոր մշակույթի զարգացման ընթացքում սիմվոլները ենթարկվել են իմաստային

տեղաշարժերի. ժողովրդական պատկերացումների մշտական փոփոխությունները ենթադրում են սիմվոլի թաքնված իմաստի ընդլայնում, բովանդակության տարողունակություն:

Այսպես օրինակ՝ թաղման ծիսակարգն ինքնին խորհրդավոր արարողություն է: Իրական և երազային պատկերացումները իմաստային դաշտով հարաբերվում են հայոց մեջ կենցաղավարող հավատալիքային, պաշտամունքային խորհրդանիշների հետ:

Ժողովրդական հայեցողությամբ՝ մահը հոգու անջատումն է մարմնից, հոգու անկախությունն ու անմահությունը:

Սահվան հավատալիքներում խորհրդանշական ձևով կարծես ավարտվում է մարմնի հնարավոր առնչությունը այս աշխարհի հետ: Հոգին մարմնից անջատվում է հատուկ արարողություններով. կանգնեցնում են ժամացույցը, որը խորհրդանշում է ավյալ անձի համար իրական, կենսական ժամանակի ավարտն ու վախճանաբանական բնույթը:

Նախքան թաղումը ծիսական արարողությունները վերաբերում են մարմնին, իսկ թաղման կարգից հետո՝ բացառապես հոգու սիմվոլացման գաղափարին:

Թաղման արարողությունների հետագա գործողությունները հարմարեցված են և ծառայում են այն նպատակին, որ հոգին նիշվի, հայտնվի ապրողներին՝ բարի եիշատակով:

Այս ամենը ժողովրդի մտածողության և հոգեբանության մեջ ամրակայվում է ինքնաբերաբար և ունի դարերի պատմություն, հետևաբար նման պայմանականությունները միաված են կայունանալու, տվյալ էթնիկական խմբում ձեռք բերելով սիմվոլային նշանակություն և ներկայանալով իբրև ծես, սովորույթ՝ մարդկային հաղորդակցման բոլոր ձևերում ու հարաբերություններում:

Սահվան մասին պատկերացումները համամարդկային են, արքետիպային, իսկ կոնկրետ ծեսերը, արարողությունները ու հոգերը ազգային բնույթ ունենալով՝ էապես տարբերվում են հուզազգացմունքային կողմերով և արտահայտման ձևերով:

Հայտնի է, որ երազներում յուրահատուկ նշաններով անսովոր կամ լսողական պատկերների հանդես գալը կարող է նոր իմաստ և նշանակություն ստանալ: Մահվան նշաններ ամփոփող երազներում մենք նկատում ենք հիշյալ երևույթը, որի ընդհանուր բնութագրականն այսպիսին է.

Երազատեսը երազում տեսնում է իրեն կամ մերձավորին, որևէ ոչ բնական, մինչ այդ անհայտ (կամ չեղած) ձայնային, գունային, անսովոր նշանով, որի համատեքստային իմաստը ներառում է մահվան ահսարան կամ պատկեր:

Այսպես. երազում՝ ոաքը սևացած...

պոռշը՝ ջուր պարձած...

դեմքը՝ մազակալած (կնոջ)...

մեջքը՝ վառված....

Այս երազներում նշանը ենթատեքստային թաքնված իմաստի կրողն է. երևալն ինքը անսովոր նշան է, միայն սիմվոլի մեջ է պարզվում՝ հայանապես երևալ է, թե՞ փոխաբերական:

Երազային պատկերացումներում էական բաղադրատարր է ձայնն իբրև սիմվոլ, որն ընդհանրացնում է թե՛ հասկացություն, թե՛ երևույթ և թե՛ գործող անձ: Ձայնային հայտնությունը երբեմն անկերպարան է, բայց որոշակիորեն ծանոթ: Հաճախադեպ լինում է նաև կերպավորված՝ պարագաների պայմանով՝ երազատեսի համար մերձավոր, սիրելի, ցանկալի կամ էլ խիստ բաղձալի ձայն, որին ինքը ընդհանրապես սպասում է՝ նրան լսելու ներքին պահանջից մղված: Այդ ձայնը կարող է լինել մեռած հարազատի ձայն, ներքին ձայն կամ այլ աշխարհից եկած ձայն՝ «Ես»-ի» ակունքների սահմաններից դուրս լսվող՝ երախանցի շեշտադրմամբ, հասցեագրված զալիքին:

«Լենինականից վեց հազար կմ հեռավորության վրա՝ Տոմսկում, կանխազգացի աղետը՝ ձայնի միջոցով: Դեկտեմբերի 7-ի առավոտյան սրտի ուժեղ ցավ զգացի, կարծես մի լսր պոկվեց ներսից, ու ձայն լսեցի՝ ահեղի, անորոշ, տարօրինակ ձայն: Ձայնից այնպես ցնցվեցի, որ մտածեցի, եթե մի քիչ էլ շարունակվի, ես կխելագարվեմ: Ոչ թե ականջս ձայն ավեց, այլ սիրտս»:

«Երկրաշարժից մի քանի օր առաջ գիշերը շատ ուժեղ գլխացավ զգացի: Ականջներս լցվեցին ուժգին ձայնով: Հետո մարմինս բռնվեց այդ ահեղ ձայնով: Ձայնն ինձ ասաց. «Դու երկու աղա ունես»: Ես սարսափեցի և արագ վրա բերեցի. «Չէ, ես երկու աղջիկ ունեմ»: Նույն ձայնը նորից կրկնեց. «Դու երկու աղա ունես»:

(Երազատես Սավդայյան Արմենուհու վկայակոչումը՝ «Երկրաշարժին կորցրի երկու աղջիկներիս՝ Անահիտին և Տաթևիկին: Մեկ տարի անց ծննդաբերեցի, ունեցա զույգ տղաներ»):

Երազում առկա երկխոսությունը երազատեսի և ձայնի միջև կանխագուշակում է վերահաս աղետ ավյալ անձի համար: Ինչպես տեսնում ենք, ենթագիտակցության դորդը ժամանակավորապես կարող է ավելի ընդունակ լինել իմաստավորելու ու որոշումներ ընդունելու, քան իրականության գիտակցման ըմբռնումը:

Այսպիսով, երազները օժտված լինելով հոգեբանական մեծ ուժով՝ սնուցանում են եսկայական հոգևոր էներգիա, դիրքորոշում և ուղղություն են տալիս երազատեսին, ապահովում նրա հետագա կենսագործունեությունը:

Գունային սիմվոլների հարցի քննարկումը, ազգային և անձնային տեսանկյունով, հույժ կարևորություն է ներկայացնում, քանի որ գույներն ունեն պատմամշակութային և հոգեբանական նկարագիր և ժողովրդի կյանքում գունային դիրքորոշումն ու որևէ գույնի նախընտրությունը առնչվում են բնակլիմայական պայմաններին, աշխարհագրական տարածքի ախպական գույներին, ինչպես նաև ավյալ ժողովրդի հուզական, հոգեկան ապրումների ուղղվածությանը:

Յուրաքանչյուր գույնի իրական առապելսաթանությունը պայմանավորվում է աշխարհի գունագուսալին ընկալմամբ, կարևոր են նաև անձի վաղ մանկության տարիների ապավորությունները:

Կապելով ավյալ տարածքի հողի, երկնքի հիմնագույներին, որոշակիորեն իմաստավորելով դրանք, գույնն իբրև սիմվոլային երևույթ, պրտացոլվում է մշակութային կյանքի տարբեր ոլորաններում:

Հայտնի է, որ մարդը տարբերում է բազմաթիվ գուներանգներ և, բնական է, որ յուրաքանչյուր գույնի ինքնուրույնությանը համապատասխան առաջանում են հուզական տարբեր հակազդումներ: Գործնականում թերևս հնարավոր չէ տարբերակել գույնի ընկալման հուզական վիճակները: Երազներում գույնի սիմվոլիկ իմաստը մեկնաբանելիս նպատակահարմար է որոշակիորեն տարբերակել գունային երանգ, գույնի հագեցվածություն և գույնի պայծառություն հասկացությունները:

Կրոնածիսական պատկերացումներում ևս կարևորվում է գունային սիմվոլի դերը, որով ավելի ներշնչող են դարձնում հավատը: Աստվածություն, լույս, խավար հասկացություններին վերագրելով որոշակի իմաստային բովանդակություն՝ Աստված-լույս միասնության և լույս-խավար հակադրության գաղափարն արտահայտելու համար, ըստ էության օգտվում ենք գույն հասկացությունից:

Ի շարս առաջնահերթ սիմվոլների, կարևորվում են գունային սիմվոլները, նախ այն, որ անձն անկախ իր բնույթից և ցանկություններից՝ ապրում է գունային աշխարհում:

Գույնը զուգակցվում է առարկայի հետ (կամ նրա մի մասի հատկանիշի), որը նույն ձևով արտահայտվում է երազներում:

Յուրաքանչյուր գույն առանձին վերցրած ստանում է սիմվոլիկ իմաստ: Ընդ որում գոյություն չունեն մարդկային ապավորություններ, որոնք երբևէ ըմբռնվեն առանց գույնի: Անքուր գույնը վերացարկում է (աբստրահում), ինչ վերաբերում է երազներին, ապա երազային պատկերները (մարդ, առարկա, բնության երևույթներ) հանդես են գալիս գույներով:

Երազներում գույները պարբերաբար ստանում են խորհրդանշանային իմաստներ՝ ենթագիտակցորեն դրսևորելով անձի վերաբերմունքը առարկայական աշխարհի և մարդկանց նկատմամբ, ինչպես նաև ժամանակի ընթացքում երազատեսի փոխհարաբերությունների փոփոխություններն ու տեղաշարժերը:

Գույնի ընկալումը հարստացնում է մարդու հոգեկան ապրումների բնույթը, որը և

փոխանցվում է երազային մտածողությանը:

Դժվար է իրապես որոշել գույնի իսկական սահմանը, այսինքն՝ ամեն ինչ պայմանական է նույն գույնի բազմազանության մեջ:

Երազային գույների նկատմամբ ևս կարող ենք պնդել այս պայմանականությունը, և միայն երազատեսը կարող է խոսել իր տեսած գույների մասին՝ ընդունելով գույնը կլսկետ երազի մեկնաբանման համար:

Գույնի ուսումնասիրությունը ընդարձակ ոլորտ է, և քանի որ սոլեաին վերաբերող եթազներում որոշակիորեն առանձնացվում են գույներն ու գունային երանգավորումները, իբրև տեսակուն հիմք վերցնենք այն գույները, որոնք հայ ազգային մշակույթում արտահայտում են կորստի, տառապանքի, կործանման, մահվան, չարի գունային սիմվոլիկան: Բերենք օրինակներ.

«Երազիս նանայ հազած կանայք քարեր էին շպրտում քաղաքի վրա: Ճահճանման կանաչը խորհրդանշում էր Հաղսոր սառցետնյա թագավորության մութ ուժերին ծառայելը»:

«Մայրս երազին աղմուկ-աղաղակ է լսել, վախով բացել է պատուհանը և տեսել իրր երկնքից սև ծրուն զուքար: Մայրս հարցրել է՝ էս ի՞նչ է, պատերա՞զմ է: Աստծու դեմքով մի ծեր մարդ, երեսը մոտեցրել է պատուհանին ու պատասխանել՝ բեթու՜ր է, բեթա՜ր»:

«Ես ծնվել եմ Կիլիկիո Մարաշում: Երկրաշարժին երազ չեմ տեսել: Տեսել եմ եղեռնին: Սեր ամրալջ քաղաքը կարմիր թիթեռներով էր լցվել»: (Արեյան Սաթենիկ, եղեռնին թրատել են ողջ գերդաստանը՝իր աչքի առաջ):

Գույնի սիմվոլի ընտրությունը պատահական չէ. ինչպես առարկաներին, այնպես էլ դեպքերին, իրադարձություններին, երևույթներին վերագրվում են գունային հատկություններ: Մեզանից յուրաքանչյուրն աշխարհի ամբողջականությունն հաստատում է գունային պատկերացումներով, ընդհուպ սոցիալական դիրքորոշման աստիճանի: Ազգագրական նյութերի վերլուծությունը, գունային տեստերի միջոցով կատարած քննությունները վկայում են մարդկանց գունային ընտրության, նրանց վերաբերմունքի հուզականության ( սառնություն, ջերմության և այլն) մասին:

Գունային սիմվոլը երազներում կարող է հանդես գալ տարբեր առանձնահատկություններով: Գույնը առարկայի անբաժանելի հատկանիշն է, այդ հատկանիշի անդրադարձումը երազային մասնողություն ուղղակի է, գույնի նշանակության կոդավորումը ինչպես իրականում, այնպես էլ երազում նույնն է:

Գույնը լրացնելով առարկային՝ որոշակիացնում է նրա իմաստային ըմբռնումը: Թեպետ երազում ևս գույնը կոնկրետացնում է առարկայի կամ երևույթի սիմվոլիկ պարզաբանումը, այնուամենայնիվ շատ երազներում մահվան սիմվոլները հատկանշվում են սև գույնի գերակայությամբ:

Հոգեախտաբանական առումով սևն ունի ժխտման, բացասման, մերժման իմաստ: Սահ պատկերող սիմվոլներում սևի նշանն իր իմաստով ուժեղացնում է բացասելու, բացառելու, ժխտելու միտումը: Նկատի ունենալով սև գույնի մասին մեր ժողովրդի էթնիկական մշակութային պատկերացումները, որոնք խիստ կայունացված են, հարկ չենք համարում անդրադառնալ սև գույնի, իբրև սիմվոլի ծագումնաբանությանը, մանավանդ որ գունային պատկերացումները որոշակիորեն կարող են բնութագրել մարդու հոգևոր առանձնահատկությունները, հոգեվիճակը, հիվանդագին ապրումները:

Գույնն՝ իբրև իշխող սիմվոլ, կարող է ազդել երազային աեքստում պատկերվող իրադարձության (կամ դեպքի) համապատասխան սիմվոլի արտահայտած թաքուն իմաստի վրա:

Այսպես՝ երազատեսը պատմում է.

«Դեկտեմբերի 6-ի գիշերը երազ տեսա. մայրիկ Աստվածածինը բոլորովին մերկ, որպիսին գրկին, միայն մի սև շալ թեքությամբ կապած էր թիկունքին: Երկնքի երեսով լաց լինելով անցնում էր ու ասում՝ ինչ պիտի գա իմ գլխին, ինչ պիտի գա իմ գլխին, արյան մեջ պիտի լողանք: Ես հարցրի՝ ի՞նչ պիտի լինի: Ձայն չհանեց ու անցավ: Անցել էր, ինքը չէր երևում, բայց լացի ձայնը լսվում էր, հա լսվում»:

Երազի մեկնումը. «Ինձ թվում է՝ Աստվածածնա լացը մեր ժողովրդին բաժին հասած հավերժական լացի ձայնն էր»:

Գունային սիմվոլն ընդլայնում է առարկայի բովանդակությունը, համաժամանակյա ներգործությամբ ուժեղացված սիմվոլներով, իմաստը դարձնում ավելի արտահայտիչ՝ բևեռացնելով բովանդակությունը. սև շալը սրսին կապած:

Երբեմն նույն երազային տեքստում սև գույնի սիմվոլիկան երևում է մի քանի դրսևորումներով, սև ամպեր, սև արև, սև գլխազարդով աղջիկ: Այսպես օրինակ.

«Երկրաշարժից մեկ ամիս առաջ երազ տեսա: Իրր բացեցի մեր տան պատուհանն ու տեսա սև ավիններով, սև համազգեստով, սև եռանկյունաձև գլխարկներով մարդիկ լցվել էին հրապարակը: Հարցրի՝ էս ի՞նչ է եղել: Ասին՝ աշխարհը պիտի քանդվի»:

(Ռոզա Խուրշուդյան, ծնվ, 1929թ. Լենինականում. «զոհվել է միակ աղջիկս, աշխարհս քանդվեց»):

Միևնույն անձի կամ առարկայի երկու և ավելի բախումային (կոնտրաստային), հակոտնյա գույներով ներկայանալը ուժեղացնում, բևեռացնում է պատկերները՝ դարձնելով հոգերանորեն ներազդ:

Այսպես, երազիս Մարիամ Աստվածածնին տեսա երկնքում՝ երեխան գրկին: Մարմնի կեսը կարմիր էր, կեսը՝ սև: Գրկի մանուկն էլ ճիշտ իր նման էր՝ կարմիր ու սև:

Մեկնումը. կարմիր և սև գույները խորհրդանշում են ժամանակ և արյան հեղում:

Երազային պատկերներում զուգադրվում են կարմիր և սև գունային սիմվոլիկան: Ախայան գույների հակաբրամխաանության մեջ ցայտուն գունաշեշտմամբ մեկն իշխում, ծածկում, ճնշում է մյուսին՝ իր իմաստով բացառելով կամ ժխտելով առավել թույլ արտահայտված սիմվոլին:

Ժողովրդական ընորոշումների մեջ, մասնավորապես աղեսի երազներում, հետաքրքրական են Աստվածության, սրբերին ու հրեշտակներին արվող գունային բնութագրումները: Այսպես.

«Երազիս ձայն լսեցի, հետո տեսա սպիտակ ու փիրուզագույն հանդերձով Տիրոջը՝ գլխին փշե պսակ»:

Հիտուսը, երբ գլխից փուշը հանեց, սևացավ, պատկերը կորավ:

Ասաց՝ դու գնա, քո ժամանակը չէ: Նորից փուշը դրեց գլխին, նորից 33 տարեկան, նորից՝ մեխված պատին, մեխի շրխկոցը լսեցի: Արյուն գնաց ձեռքերից»:

«Երազիս Հիսուս Քրիստոսին տեսա՝ կապույտ շորերով, կարմիր գոտիկը մեջքը կապած, փիսկալը կախ ընկած: Ընձի նայեց ու ըսավ՝ ճերիք է, ճերիք լաց էղնիս: Տե՛ս, շորերս լրիվ թրջվել են»:

(Արուս Ասատրյան, ծնվ. 1920թ. Կարսեցի): Երազի մեկնումը. «տիրոջ արաաքին նկարագրի գունային գնահատականը՝ կապույտ շորեր, որ թերևս խորհրդանշում է երկնային գոյ լինելը, կարմիր գոտիկը մեջքը կապած, որ կենաց խորհրդի համապատասխան է:

«-Երազիս վերև նայեցի. առաստաղի փոխարեն բաց երկինքն էր, երկնքում տեսա առանց մորուքի, սպիտակ դեմքով, ալ կարմիր շորերով ծերունու: Նա մի փոքր առաջ թեքվեց ու ասաց. «Եկա, որ իմ երևալով ձեզ ասեմ, ով ես կամ» (Վարդանյան Ալբերտ, ծնվ, 1955թ. Լենինականում, քանդակագործ):

Երազի մեկնաբանումը. Ասածս գուսայրս ընկալման մեջ հաճախադեպ է սպիտակ և կարմիր գույների զուգորդումը: Սպիտակ դեմքով, ալ կարմիր շորերով ծերունու երևալը երկնքում հավասի և հույսի զորություն է ենթադրում:

Միևնույն գույնը տարբեր մշակույթ կրողների ընկալմամբ տարարնույթ իմաստային և զգայական ընկալում ունի: Գույնը մարդկային կենցաղի ենագույն իրողությունն է:

Ներկայացնենք գրի առնված երազներից դուրս բերված այն գունային սիմվոլները, որոնք փաստամ են վերը շարադրվածը. կանաչ հագած կանայք, կարմիր անձրև, սև ջուր, սև ամպեր, սև սաթ, սև գլխազարդով աղջիկ, ճահճականաչ քաղաք, կարմիր մշուշ, սև թուղթ, սև ու մութ ջուր, դեղին ձյուն, սև գունդ, սև շալ թիկունքին կամ սրսին կապած, սեացած խնձորենու անկիներ ու շիվեր, սև սզին, սև համազգեստ, սև գլխարկ, պաստանի՝

պարանոցին մատաղացու գառի կարմիր ժապավեն, սև ու տաք մազութ՝ քաղաքի վրա թափվող, կաթնագույն ճերմակ մարգարիտներ՝ շաղ տված փողոցներում, սև ժապավեն, սև ձյուն, սև եալւսծ ձյուք, վասվող քաղաք, կարմիր, շիկացած պատեր, կարմիր թիթեռներով լցված քալւսք, սև ագռավների կոնչոց, քաղաքի գլխին ւիողվողացող սև դրոշ, կապույտ քարերով քաղաք, երկնքից թափվող դեղին ձյուն, արնագույն երկինք, դեղին և կանաչ գույնի արև, սև ցույի ընկնելը մարդկանց վրա, սայլ քշող սներ եագած կին:

Արայիսով՝ եոգերանական ընկալմամբ, տեսողական զգայությունները անտրոեելի են գույներից: Գույնի ընկալումը պայմանավորված է մարդու պաեանջմունքների, զգացմունքների, եուզական վիճակների և անձնային դիրքորոշումների եևս:

Անձի գունային ընկալումը սուբյեկտիվ է, և որովեետև ժառանգական պայմանավորվածություն ունի, ընրոնվում է նաև իբրև սոցիալական վիճակի ցուցիչ:

# ПРОЯВЛЕНИЕ СИСТЕМЫ ЗНАКО-СИМВОЛИЧЕСКОЙ ОСОБЕННОСТИ СНОВ ПОСТ-БЕДСТВЕННОГО ПЕРИОДА


*Резюме* *К. Саакян*

В течение исследования определенно переосмыслялось народное представление о снах как особом выражении национального мышления. Было исследовано непосредственное влияние или перенос архетипного мышления, национальных суеверий, обрядов, обычаев, традиций на народные толкования сновидений.

Сон является выражением знаковой системы духовной культуры человека. Сколь подробно бы мы ни оценивали символ как явление и понятие, в любом случае невозможно образцы сновидений свести к однообразным символам. Даже наиболее точно истолкованный текст сновидения тем не менее является формой нового символа, который в свою очередь требует толкования.

Любой носитель национальной культуры обнаруживает на словесном уровне свою систему символов. Через особенности языка символов мы выражаем наше внутреннее состояние как чувственное восприятие.

Для процесса психорегуляции большое значение имеет постепенное усвоение национальных символов. Знание символов, используемых в данной национальной культуре, облегчает понимание сознательной и подсознательной психической деятельности носителей этой культуры. В этом смысле является большим богатством для данной культуры.

Значение культурного символа передается от поколения к поколению путем словесного пересказа, превращается в форму сновидческого мышления с его разнообразными проявлениями.